«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի Ֆեդերացիայի
Գործադիր տնօրեն՝ Ա. Գևորգյան
«22» հուլիս 2023թ

Շախմատի կանանց Հայաստանի 79-րդ առաջնության
առաջին խմբի մրցաշարի

Կանոնադրություն

Անցկացման վայրը. Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա

Ժամկետները. Մրցաշարը կանցկացվի 2023թ. հուլիսի 22-ից օգոստոսի 1-ը,

Մասնակիցները. Մասնակցության իրավունք ունեն՝

ա. 2001 և բարձր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստուհիները,

բ. կիսաեզրափակիչ մրցաշարում 1-10-րդ տեղերը գրաված շախմատիստուհիները,

գ. Հայաստանի մինչև 18, 16, 14 և 12 տարեկան աղջիկների առաջնությունում 1-3-րդ տեղ գրաված շախմատիստուհիները,

դ. Հայաստանի մինչև 10 տարեկան աղջիկների առաջնությունում 1-ին տեղ գրաված շախմատիստուհին

Մրցակարգը. Շվեյցարական մրցակարգ, 9 խաղափուլ

Ժամակարգը. 90 րոպե յուրաքանչյուր մասնակցին առաջին 40 քայլի համար, այնուհետև լրացուցիչ 30-ական րոպե մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից

Խաղասկզբի համար սահմանված ժամից 30 րոպե ուշացած մասնակցին կգրանցվի պարտություն:

Լրացուցիչ ցուցանիշները. Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը որոշվում են ըստ՝

1. Հատված Բուհգոլց -1 ցուցանիշի
2. Բուհգոլցի ցուցանիշի
3. Սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն թվի

1-3-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստուհիները իրավունք կստանան մասնակցելու Հայաստանի կանանց շախմատի առաջնության 2024թ. բարձագույն խմբի առաջնությանը:

Առաջին խաղափուլի մեկնարկը հուլիսի 23-ին ժամը 11:00

Հանրապետության մարզերը ներկայացնող 2025 և բարձր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստուհիները մրցումների ընթացքում կապահովվեն հյուրանոցով և օրապահիկով: Նրանց ճանապարհածախսը, ինչպես նաև ուղեկցող անձանց, մարզիչների բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը: